

Դ. ԱՆԱՆՈՒՆ.

Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում. (1800—1870), հատոր առաջին. հրատարակութիւն Տիգրան Բուդաղեանի, Բագու, 1916 թ. IV+412 էր. գ. 2 ռ. 50 կ.

ԺԹ. դարու սկզբներին երեք խոշոր հատուածների բաժանուած հայ ժողովուրդը տարբեր կուլտուրական պետութիւնների ենթակայ լինելով, տարբեր էլ կուլտուրական հասարակական զարգացում ունեցաւ յիշեալ դարում: Բնականաբար հայի պատմութեամբ հետաքրքրուողը իւրաքանչիւր հատուածի կեանքն առանձին ուսումնասիրութեան նիւթ պիտի դարձնէր, ինչպէս և եղաւ:

Ռուսահայերի ԺԹ. դարու պատմութեան առաջին գրողը եղաւ վաստակաւոր աշխատող Աղ. Երիցեանը, որը միաժամանակ մեզանում պատմութիւն գրելու իւրայատուկ մեթոդը աւանդ թողեց, որից չազատուեցին ուսսահայերի պատմութեամբ զբաղուողները մինչև մեր օրերը:

Աղ. Երիցեանի պատմագրութիւնը վաւերագրեր գտնելու, փոշու տակից հանելու, միմեանց կցելու և մի քանի ծանօթութիւններով պարզաբանելու աշխատանքով էր սահմանափակուած: Նրա աշխատանքները պատմագիտական պահանջներին բաւարարութիւն չեն տալիս, որովհետեւ պատմութիւնը վաւերագրերի ժողովածու չէ, պատմութիւնը ինքը կեանքն է իւր ամբողջութեամբ անվերծանելի ու անհնար ընդգրկելու իւր խորութեամբ. Երիցեանի աշխատանքները աւելի շուտ վավերագրերի ժողովածուներ են, որոնցից պէտք է պատմագրողը օգտուի ուսսահայերի ԺԹ. դարու պատմութիւնը գրելիս:

Դժբախտաբար Երիցեանի պատմագրութեան մեթոդը աւանդաբար պահում են միւս գրողներն ևս. սակայն եթէ Երիցեանի ժամանակ պատմագիտութիւնը դեռ պատմութեան իմացութեան, նիւթի և մեթոդի խնդիրները լուրջ քննութեան չէր առել և Երիցեանը հնարաւորութիւն չունէր պատմագիտական լուրջ աշխատանք տալու, այժմ այդ հարցերը բաւականաչափ ուսումնասիրութիւնների նիւթ են դարձել և ներկայիս գրողը հնարաւորու-

թիւն ունի պատմութիւն գրելիս աւելի պատրաստի, աւելի զիտական միջոցների դիմելու:

Սակայն ցայսօր պատմագիտութիւնը ուսանայիւրի պատմութեամբ զբաղուողներից և ոչ մէկի համար յատուկ ուսումնասիրութեան խնդիր չի դարձել և հետևանքն այն է, որ այժմ էլ մեզանում երիցեանի աւանդ թողած մեթոդն է կիրառուում պատմութիւն գրելիս:

Վերնագրուած աշխատանքը որքան հետաքրքրական է իր վերնագրով և իւրատեսակ, այնքան պակասաւոր է նիւթի մշակութեան, խնդիրների պարզաբանութեան տեսակէտից:

Որքան և մեր գնահատութեան չափը համեմատաբար մեղմ, աւելի խրախուսող, քան վհատեցնող պիտի լինի ընդհանրապէս, քանի որ մեր կեանքն այնքան է խոպան, անմշակ, որ իւրաքանչիւր նոր խօսք միշտ շնորհակալութեան է արժանանում, բայց և այնպէս հեղինակին ներելի չէ ի. դարում ևս շարունակել գործադրել երիցեանի մեթոդը պատմագրութեան, մանաւանդ որ այժմ թէ աղբիւրներն են աւելի շատ, թէ նրանցից օգտուելու յարմարութիւններն են աւելի և թէ մանաւանդ պատմութեան նիւթի հետ ի՞նչպէս վարուելու, ի՞նչպէս նրանից օգտուելու և հզրակացութիւն հանելու օժանդակ աղբիւրներն են բազմապիսի:

Ճշմարիտ է հեղինակը իւր յառաջաբանում յայտնում է «Մենք միայն մեզ ուղեցոյց ենք ունեցել պատմական մատերիալիզմի մեթոդը. նախ հասկանալ իրերի ընթացքը, ապա հետևել գաղափարների ընթացքին» (11 եր.) որով կարծես պէտք է տարբերուէր իւր նախորդ գրողներից, որոնք այդօրինակ զարմանալի մեթոդի գործադրութիւնից շատ են հեռու եղել, բայց հէնց այս նախադասութիւնը ցոյց է տալիս, թէ որքան թերի հասկացողութիւն ունի գրողը առհասարակ մեթոդի և յատկապէս պատմութեան մեթոդի վրայ:

Տարբեր աշխարհայեացքի տէր պատմագիրները այնուամենայնիւ միևնոյն մեթոդն են գործադրում, որովհետև մեթոդը պատմագրողի համար այն գործնական միջոցն է, որով նա աւելի ուղիղ ու աւելի հեշտ պիտի հանէ իւր ցանկացած նիւթը. այլ հարց է, թէ իւր գտած նիւթը ի՞նչպէս կբացատրէ. այդ արդէն նրա աշխարհայեացքի խնդիրն է. գրողը որքան և «պատմական մատերիալիզմի, մեթոդին» է ուղղում հետևել, բայց նրա աշխատանքը իւր էութեամբ երիցեանի մեթոդից շատ քիչ է տարբերւում:

Գրողը աշխատել է իւր ոյժերի ներած վաւերագրերը՝ (առաւելապէս տպագրած) կարդալ, իր կարծիքով կարևոր համարուողը դնել գրքում և շաղկապել նախընթացի հետ: Մի աշխա-

տանք, որ կատարել է մեթոդի տեսակէտից նաև Երիցեանը, որը գործադրում է և Լէօն: Երեք գրողների համար էլ պատմական վաւերագիր հրատարակելը իրենց խառնուցքին վայել մի քանի մեկնողական խօսքով պատմագրութիւն է. մինչդեռ նորագոյն պատմագիրութեամբ փոքր չափով անգամ գրադուողի համար այդ աշխատանքը պատմագրութիւն լինելուց շատ հեռու է. առաւելելն նոյն կէտի վերաբերող վաւերագրերի դիւան—արխիւ պիտի նկատուի:

Աշխատասիրողի վերնագրած երկի ամենից աւելի աչքի ընկնող պակասը պատմագիտական մեթոդի անծանօթութեան մէջ է. նրա աշխատանքը վաւերագրերի ժողովածու է, որոնց հրատարակութիւնը շնորհակալութեան արժանի է, բայց որոնց «Ռուսահայերի հասարակական զարգացումը» վերնագիրը տալը թիւրիմացութիւն է: Ճշմարիտ է հնչեղ ու գրաւիչ է վերնագիրը. բայց երբ աշխատանքի բովանդակութեանն հս անցնում և սօցիօլօգիական պահանջներն առաջադրում (աշխատանքի վերնագրի համեմատ այն պէտք է սօցիօլօգիական լինի) ակամայից ստիպուած ես լինում վերնագիրը «վաւերագրերի ժողովածու» անունով փոխելու:

Գրողի ամբողջ աշխատանքից երևում է, որ մեծ հոանդ է գործադրել նիւթերը հաւաքելու, դասաւորելու աշխատանքի համար. դժբախտաբար այդ հոանդի համապատասխան պատրաստութիւն չունենալը աշխատանքին պակաս գնահատութեան է արժանացնում:

Ոչ միայն պատմագիտական սօցիօլօգիական մեթոդ չունի գրողը, այլ և նիւթեր հաւաքելու խնդրում էլ միակողմանի է եղել:

Նա օգտուել է առաւելապէս ռուս լեզուով լոյս տեսած աշխատանքներից՝ վաւերագրերի ժողովածուներից (III եր.) մինչդեռ հայ հաստատութիւնների դիւանատներում ամբարած վաւերագրերը գրեթէ անուշադրութեան է մատնել: Գրել ռուսահայերի ժ. դասրու հասարակական զարգացման մասին և չօգտուել կաթողիկոսական Դիւանից, Սինօդից, առաջնորդների, դպրոցների արխիւներից անշուշտ յանցանք է, և գրողը այս աշխատանքը չի կատարել. պարզ է, որ նրա գրուածքը թերի է և երևոյթներին վերաբերող նիւթերը միակողմանի:

Նա օգտուել է մեծ մասամբ օտարազգի աղբիւրներից, որոնք անպայման հայ ժողովրդի կեանքի երևոյթները ըմբռնելու երևոյթը լրիւ արձանագրելու տեսակէտից միակողմանի են եղել. մանաւանդ, որ այդ աշխատանքները կամ պաշտօնական յանձնարարութիւն կատարողներ են եղել, կամ պետական պաշտօնեաներ

կամ առ առաւելն ճանապարհորդներ. որոնք տեսել, լսել են այս ու այն և արձանագրել: Իսկ դրանց դիմաց մեզանում կան չհրատարակած ահագին քանակութեամբ վաւերագրեր, տուեալներ, որոնք նոյն խնդիրը այլ կերպ են լուսաբանում: Խոստովանենք, որ մեր հիմնարկութիւնների դիւանատները աւելի քան անխնամ դրութեան մէջ են պահւում և օգտուելը դժուար է, սակայն այս հանգամանքը արդարացուցիչ փաստ չի կարող լինել պատմական երևոյթը միակողմանի բացատրելու դէպքում: Այս միակողմանիութիւնն է պատճառ, որ զանազան երևոյթներ գրողը սխալ է բացատրել ու թիւրիմացութեան մէջ ընկել: Երբորդ խոշոր թերութիւնն այն է, որ հեղինակը ուշադրութեան չի առել ողու կէտքի հասարակական-գրական հոսանքների խնդիրը, որոնք մեծ չափով ազդել են ողուահայերի հասարակական զարգացման վրայ: Սկսած 50-ական թուականներից այդ ազդեցութիւնը գրեթէ քայլ առ քայլ նկատուում է մեր կեանքի վրայ^{*}). այլ և եւրոպական այն հոսանքների ազդեցութիւնը, որոնք ողաների միջոցով մեզ են անցել, (տեսնել А. Веселовск-ու «Արեւմտեան Եւրոպայի ազդեցութիւնը ողու գրականութեան վրայ. 1916 թ. հրատարակութ.»):

Յայտնի է, որ հայ ժողովուրդը առաւելապէս փոխ առնող, քան ստեղծագործող է եղել վերջին դարերում յատկապէս և այս հանգամանքն ի նկատի ունենալուց յետոյ բնական է, որ դրսի ազդեցութիւնների խնդիրը անուշադրութեան մատնող գրուածքը պակասաւոր կլինի:

Գրողի աշխատանքի էական արժանիքն այն է, որ հայ հասարակական կեանքով հետաքրքրւողներից քչերին մատչելի նիւթերը ի մի է հաւաքել, շաղկապել և ուսումնասիրողի համար նիւթ է տուել: Իւր ընդհանուր դատողութիւններում յաճախ սխալանքների մէջ է ընկնում, քննուող հարցին վերաբերող նիւթերը լրիւ ձեռքի տակ չունենալու պատճառով, մասամբ հապճեպ եզրակացութիւններ է հանում պատմագիտական միակողմանի աշխարհայեացքի հետեւելով և սխալանքների մէջ ընկնում, ընդհանուր զարգացման կողմից բաւարար պատրաստութիւն չունենալու պատճառով:

Ասածներին պարզաբանութեան համար օրինակներ բերեմ.

3-րդ երես «... յաղթանակող է այն կուլտուրան, որ իր շուրջն օղակում և համախմբում է հոծ մարդկային զանգուածներ, որ յաղթանակող է այն կուլտուրան, որ ստեղծում է արժէքներ ոչ թէ հասարակութեան մի շնչին խաւի, այլ նրա մեծամասնութեան

^{*}) Ուշադրութեան առնենք հէնց Ю. Веселовск-ու անկետան ազդուած հայ հեղինակներին՝ թէ ո՞ր ողու գրողն է ազդել հայ հեղինակին:

համար:—Որ Զինաստանը, Հնդկաստանը հոծ մարդկային զանգուածներէ համախմբում իր շուրջը կամ անգամ Ռուսաստանը վիճելի չէ, բայց որ դրանց կուլտուրան յաղթանակող չէ, դրան էլ մենք ենք ականատես: Որ հին Հռովմում կուլտուրան մի քանի պատրիկ ընտանիքների ծնունդ էր այդ պատմութեան տուեալն է, բայց որ այդ կուլտուրան է այժմ էլ արեւմտեան Եւրոպայի քաղաքակրթութեան հիմքը, այդ էլ կուլտուրայի պատմութեամբ զբաղողներին քաջ յայտնի է և այլն օրինակներ: Ընդհանրապէս կուլտուրայի յաղթանակը մարդկային հոծ բազմութեան հետ կապելը կուլտուրայի էական ոյժը չհասկանալուց է կախուած, որովհետև կուլտուրան հոգեկան ոյժերի ստեղծագործութեան արդիւնք է, որակի հետ է կապուած և ոչ քանակի: Նոյն երեսում «Եթէ հայութիւնը միջին դարերում ունենար...» Եթէ-ներով պատմական երևոյթը բացադրել ցանկանալը կնշանակէ կիրառել ռուսական յայտնի առածը «Если бы бы да кабы...», եթէ-ով պատմական երևոյթը կբացատրուէ այն դէպքով, երբ այդ եթէ-ի հետ այլ եթէ-ներ չծագեն. դժբախտաբար մի եթէ ընդունելու դէպքում հազարաւոր այլ եթէ-ներ են առաջ գալիս ոչ պակաս իրաւունքով. պատմագիտութեամբ զբաղողը նման փորձեր կատարելուց խուսափում է:

5-րդ երես—«Հաւանօրէն այդ (հայոց) գաղթականութիւնները զլիաւորապէս գոյանում էին քաղաքային բնակալութիւնից... Դա արդարանում է և պատմութեան տրամաբանութեան առաջ». փոխանակ հաւանօրէն ասելու գրողը լաւ կանէր մեր պատմագրերը կարդար և տեսնէր, որ գաղթականութեան մէջ մեծ տոկոսը կազմել են գիւղերի ժողովուրդը, և որ պատմութիւնը տրամաբանական պահանջ չունի, որ անպատճառ գաղթողները քաղաքներից լինեն. հարկաւոր է հին պատմութիւնը՝ Հռովմի, Բիւզանդիայի վերյուշել, ներկայ պետութիւնների գաղութային քաղաքականութիւնը ի նկատի առնել պատմութեանը այդօրինակ տրամաբանութիւնից ազատելու համար: Այդ սխալ տրամաբանութեան հետեւանքն է և այն պնդումը, որ «Հայ գիւղացին անկարող էր քաղաքացու պէս հեշտութեամբ բաժանուել հայրենիքից» (5-րդ եր.) Տեսէք Շիրակից, Ախալքալաքի գաւառից որքան հայեր են գաղթել ու գաղթում դէպի անգամ Ամերիկա. իսկ թէ որքան են այժմ քաղաքները լցւում գիւղացիներով այդ գրողը իւր աչքի առաջ է տեսնում:

20-երես. «... Հնարաւոր են դառնում այնպիսի երևոյթներ և պատահականութիւններ *), որոնց համար դժուար է պատմական

*) Ընդգծումն իմն է:

օրինաչափութիւն գտնել»—Պատմական մատերիալիզմին հետևողի համար ընդգծուած բառը ընդունելի չէ համարւում. գրողը մոռացել է, որ ինքը այդ աշխարհայեացքին պիտի հետևէ. իսկ այդ մոռացկոտութիւնը գրուածքին զրկում է մի որոշ, մշակուած ըմբռնումով գրուած լինելու անհրաժեշտ պայմանից։

43 եր. «... հազիւ քե մահուան պատժի իրաւասութիւն ունենային» *).

45 եր. «Մեկիքի նիւթական պահանջները մեծ չեին կարող լինել այդ ժամանակաշրջանում»։ Ուշք դարձրէք ընդգծուածներին և կտեսնէք, որ լուրջ, երկար նստած աշխատաւորի գրչի տակից նման արտայայտութիւններ չէին ելնի, մանաւանդ առանց քիչ թէ շատ բաւարար պատճառաբանութիւնների. գրողը շտապել է իւր աշխատանքը կատարելիս և հաւասարաչափ չի մշակել նիւթը։ Նոյն օրինակ «հաւանօրէն»-ներ ունի նաև 11—2 երեսներում. «Պատմութեան անծանօթութեան և օտար՝ կաթոլիկ եկեղեցու ձգտումը բռնազրօսիկ ձևով հայ եկեղեցու վերագրելու սխալ հասկացողութեան հետևանք է և հետևեալ միտքը» ... «հայ եկեղեցին ձգտում է գերիշխանութեան և պայքարելով աշխարհական իշխանութեան դէմ՝ թուլացրեց նրան» (80 եր.) գրողը պիտի կարգայ մեր եկեղեցու պատմութիւնը, զբաղուի մեր մատենագրերով յիշելու համար, որ հայ եկեղեցու հայրապետներն էին գնում յաճախ Տիգրոն ու Բիւզանդիոն հայ արքաների համար միջնորդելու, հայ արքայ խնդրելու երկրի համար, որ հայ եկեղեցու մեծագործ հայրապետ ս. Սահակ Պարթևն էր հայ նախարարներին ասում «Իմ հիւանդ ոչխարը, օտարի առողջ գազանի հետ չեմ փոխի»։ Գրողը թող ուսումնասիրէ հայ եկեղեցու պատմութիւնը և երբ իրօք համոզուի, թէ հայ եկեղեցին կաթոլիկ եկեղեցու օրինակով էր առաջնորդւում այն ժամանակ աւելի խիստ գրէ, բայց Պապի և Ներսէս Մեծի յարաբերութիւնը օրինակ բերելով հայ եկեղեցուն վերագրել չեղածը պատմագրողին վայել չէ, թէկուզ նա լինի պատմական մատերիալիզմի հետևող։

Հայ եկեղեցու պատմութեանը անծանօթ լինելու հետևանք է նաև յաջորդ երեսներում հայ եկեղեցու մասին արձակած վճիռները։ Ըստ իս գրողը ժթ. դարում մի անգամ արդէն ընդհանրացած այն կարծիքից, թէ հայ հոգևորականը, եկեղեցին ֆեոդալար են եղել ու են հայ ժողովրդին, ազատ չի մնացել և այդ լրագրական ճշմարտութիւնը գործադրել է իւր լուրջ աշխատանքում, մինչդեռ իրեն վայել չէ մեր ժամանակի հայ լրագրերի «ուսումնասիրութիւնների վրայ հիմնուել և որոշումներ տալ»։

*) Ընդգծումները միշտ էլ իմս են։

Ճշմարիտ է հայ եկեղեցին էլ իր դոյութեան ընթացքում տխուր շրջաններ, անարժան հոգևորականներ ունեցել է, սակայն նրա կուլտուրական աշխատանքը չպէտք է մոռացութեան տալ: VIII-րդ գլուխը վերաբերում է հայ եկեղեցուն և այստեղ գրողը միակողմանի է եղել. հայ եկեղեցու կուլտուրական աշխատանքը յանձին Սիմէօն մեծագործ կաթողիկոսի արածի մոռացութեան է տուել:

104 եր. ասում է «Հայութիւնը ազգութիւն չէր իր մեջ և իր համար, նա իր ազգութիւն լինելը չէր գիտակցում»*) Ազգութեան ինչ լինելու մասին խօսելը մեզ հետու կտանէ. նկատենք, որ ազգութեան գիտակցութիւնը տարբեր ժամանակներում տարբեր գործոն ոյժերի վրայ է հիմնւում և տարբեր էլ հանդէս գալիս: Սկսած ֆիզիքական դոյութեան պաշտպանութեան կարիքից մինչև հոգեկան կուլտուրական ամենալսեմ գաղափարի պաշտպանութիւնը գործոն ոյժեր կան, որոնք երևան են գալիս և ազգին ամբողջութեան գոյն, բովանդակութիւն տալիս: Հայը իր դոյութեան ընթացքում այդպիսի գործոն ոյժեր ունեցել է յանձինս Տիգրան մեծի, Տրդատի, Ե. դարու կրօնական հալածանքների, Ժ. դարու Մայր Աթոռի տեղի. վերջապէս Մայր Աթոռի իրաւական դրութեան, վերջերս լեզուի, գրականութեան որոնք միութեան, ազգի գիտակցութեան ոյժեր են եղել: Այն էլ աւելացնենք, որ ազգային գիտակցութեան ամբողջութիւնը մշտապէս վառ գիտակցութիւն չէ, որ ամեն ժամ երևան գայ և որ գլխաւորն է ազգի անդամների մեծագոյն մասի համար գիտակցական ըմբռնում չէ. այդ գիտակցութիւնը մեծ մասամբ միայն որոշ փոքրամասնութեան սեփականութիւն է, որին հետևում է մնայուն մեծամասնութիւնը: Սա մի սօցիօլօգիական բնորոշ երևոյթ է, որին ծանօթ չլինելով հեղինակը նման սխալ մեկնութիւնների մէջ է ընկնում: **)

Եթէ նա յիշէր հնդկահայերի ձգտումը հայերին ազատելու նկատմամբ, Հայաստանի յիտ գնման գաղափարը, կաթողիկոսի դիրքը, դժուար թէ այդպիսի բան գրէր:

Դարձեալ անծանօթութեան հետևանք է և հայերի հասցէին, ուղղած իւր ծանր մեղադրանքը 104. երեսում «Ռուս նուաճողներին նրանք (հայերը) գիմեցին որպէս մուրացիկներ, որպէս հասարակական լայն բնազդներից զուրկ արարածներ, որպէս շա-

*) Ընդդժումը գրողինն է.

*) Այս առթիւ հետաքրքիր է կարգալ «Изъ исторіи чести и совѣсти» А. Пѣшехоновъ-ի յօդուածը «На славномъ Пути» ժողովածու. II մ. 58—80 եր.

հախնդրութեան և գծութեան մոլի երկրպագուներ: Եւ զարմանալի չէ, որ դա այդպէս էր: Մի ազգ, որ դեռ միջին դարերում արտաքին ճնշումների շնորհիւ ստեղծել էր իր համար, այս բարոյական ուղեցոյցը, թէ՛

Կուզեմ որ յազիզ կենաս, որ ամեն մարդ զքեզ սիրէ,

Դուն հողուն նման կեցիր, որ ամեն մարդ զքեզ կոխէ,—

(Նահապետ Քուչակ)

այդ ազգը չէր կարող բարձր առաքինութիւններ սնուցանել իր ժողովում:

Հայ ժողովրդի առաքինութիւնների մասին խօսողը բարեբախտաբար օտարներն են եղել, որոնց գրողը աւելի հաւատ է ընծայում և այդ դրողները հայի աշխատասիրութեան, ընտանեկան սրբութեան, ձեռներէցութեան մասին բազմիցս են վկայել: Այդ էլ թողնենք, եթէ հեղինակը կարդար Դաւրիժեցին, ուր նկարագրուած են հայ մարտիրոսների օրինակելի տիպերը, որոնցից մէկն է Մուրացան՝ Անդրէաս Երէցը, եթէ նա Աճառեանի և Մանանդեանի հրատարակած Նոր վկաները կարդար, եթէ նա ուշադրութեան առնէր Իսրայէլ Օրուն և նրա ժամանակի շարժումները, եթէ չմոռանար այն հայ կաթողիկոսներին, որոնք շղթայուած, տանջանքներ են կրել հայ եկեղեցու, ժողովրդի համար, եթէ նա ժԹ. դարու տաճկահայ մարտիրոսներին յիշէր և հերոսներին իր տողերը կ'ընջէր իր յախուռն դատողութիւնից. բայց նա այդ իրողութիւններին եթէ լաւ ծանօթ էլ է մեկնութիւն չի տալիս և Քուչակի թոյնով լի ծաղրին, ուղղուած քսուներին, իւրայատուկ մեկնութիւն է տալիս. հեղինակի աշխատանքի արժէքը շատ է փոքրանում նմանօրինակ յախուռն դատողութիւններ իր մէջ բաւականաչափ ունենալու պատճառով: Եւ այս առաջ է գալիս ինչպէս վերևը նկատեցինք, գրողի առաւելապէս օտար հեղինակների վկայութիւններին դիմելու պատճառով: 105—7 երեսը լի են նման դատողութիւններով: Զարմանալի չի լինի, որ մի այլ գրող հայերի մասին վատ կարծիք յայտնի, երբ նա դիմէ Գոլիցինի հայերի մասին տուած վկայութիւններին, կամ երիտասարդ-թուրքերի հրատարակած «Սպիտակ դիրքը» միայն կարդար. ճշմարիտ որ այդ դէպքում հայերի մեր ժամանակի հրէշաւոր բնաջնջմանը շատ էլ դայրոյթով չի վերաբերուի: Ինչո՞ւ հեղինակը մոռանում է Խ. Աբովեանի, Պոօշեանի նկարագիրը հայ գիւղացու, որոնք առաւելապէս դեռ ԺԸ. դարու կնիքն ունէին իրենց վրայ, բայց որոնց մէջ կային թագնուած հոգու ոյժերի մարգարիտներ, միայն փոշով, մոխրով ծածկուած: Միակողմանիութիւնը այս դէպքում աւելի քան աչքի է ընկնում, որից

խուսափելու համար գրողը շտապողական աշխատանք կատարելուց հետո մնալու պահանջ պիտի ունենար և հարցը լրջօրէն, բաղձակողմանի քննութեան նիւթ դարձնելու պարտականութիւնը:

Հային քննադատել, ցոյց տալ իրօք թերի կողմերը անհրաժեշտ աշխատանք է. կարևորն այն է, որ քննութիւնը փաստերի վրայ հիմնուի և առարկութիւնների տեղիք չտայ:

223. Եր. «Կարելի է անվերապահ ասել, որ եթէ Անդրկովկասի բաղաժնեբուն մորէ կուլտուրայ կամ տանելի կենցաղ կար՝ դա տեղի ունէր համաբարութիւնների շնորհիւ» Հէնց այդ «անվերապահ» դատողութիւններն են, որ հեղինակի գրուածքին տալիս են դիլիկտանտի աշխատանքի բնոյթ, որից պիտի զերծ լինի նման աշխատանքը: Գրողը կարծես իր աշխատանքին աւելի թեթեւ աչքով է նայել. մինչդեռ ես նայում եմ իբրև մի լուրջ աշխատանքի և այստեղից էլ առաջ է գալիս երկի արժէքի փոքրացումը:

Գրողն էլ պիտի համաձայնէ, որ գիրն ու գրականութիւնը կուլտուրայի մասերն են, իսկ այդ համաբարութիւնների շնորհիւ չէր պահւում ու դարգանում, այլ հայ եկեղեցու, հոգևորականների և ունեւոր դասի: Այս փաստն իմանալուց յետոյ նորից նման «անվերապահ» պնդում անելու համար գրողը պէտք է հրաժարուի կուլտուրա բառը հասկանալու կարողութիւնն ունենալուց. բայց այդ կարողութիւնը նա ունի. և եթէ այդ պնդումը այնուամենայնիւ անուամ է, այդ նրա հապճեպ, շտապովի աշխատանք անելու վտանգաւոր սովորութիւնից է առաջ գալիս:

Նման առարկելի կէտեր կան և 255, 314—5, 318, 368—9, 375, 376, 390, 405—6, երեսներում, որոնց մասին խօսելը կնշանակէ նորից օրինակներ բերել ցոյց տալու, որ գրողը իր ձեռքի տակ չի ունեցել հայ աղբիւրները և հապճեպ աշխատանք է կատարել: Նիւթը մշակելու, գրածը նորից ու նորից կարդալու, շտկելու, արտայայտութիւնները ճշմարտութեանն աւելի մօտեցնելու անհրաժեշտ պարտականութիւնից առհասարակ մեր գրողները խուսափում են և այս դէպքում գրողը իր նախորդների ճամբից չի շեղուել, անշուշտ ի փաստ իր աշխատանքի:

Իւր աշխատանքին խնամքով չվերաբերուելու հետեանք է և այն, որ զանազան ստատիստիկական տուեալները իրար հոռից տող է տող գրել է, փոխանակ տախտակներ կազմելու որով և քիչ տեղ կրօնէր նիւթը և որ գլխաւորն է աւելի պարզ կլինէր ասելիքը, հեշտ կլինէր համեմատութիւն անելը: Այդ տուեալները գտնում են 199—207, 319—322, 324—5 երեսներում:

Գրողը ունի իւրայատուկ ոճ. գործ է ածում գրաբառ, հին՝ 60—70—ական թուականների բառեր, ամենայն հաւանականու-

թեամբ այդ ժամանակի գրուածքները յաճախ կարդալով, ակամայից որոշ բառեր գործ է ածում: Գլխաւոր թերութիւնը կըրկնութիւններ ու աւելորդաբանութիւններ ունենալն է: Աւելորդ է Գլ. III. առաջին պարբերութիւնը 69. եր. վերջին տողում կըրկնւում է այն, ինչ որ մի քանի տող վերն է ասել. նմանօրինակ կըրկնութիւնը աւելորդ է. կըրկնում են այն ժամանակ, երբ բաւական երեսներ են անցել և ընթերցողը կարող է մոռացած լինել վերն ասածը:

159. եր.—ի ծանօթութիւնը կըրկնութիւն է 130-երեսի գ. պարբերութեան

253—4. եր. վերջին պարբերութիւնը կըրկնութիւն է 177. երեսի սկզբի պարբերութեան:

Լեզուի անկանոնութեան օրինակ է 19—20 երեսում. Կ. Մարկսի 18 Բրիւմէրի մի կտորի թարգմանութիւնը:

31 եր. «... իրենց ծագման և տոհմի հնութեան մասին մեծ համոզում ունէին» պէտք է լինի մեծ կարծիք ունէին.

43 եր. «Մեղիքը դրամ էր նուիրում հաց բերողին, որ հացթուխի կողմից էր լինում»—հաւանօրէն ուզում է ասել «մեղիքը հացթուխի կողմից հաց բերողին դրամ էր նուիրում»:

44 եր. «... ժողովուրդը բաժանում էր մեղիքի ուրախութիւնն ու տխրութիւնը»—պէտք է լինի՝ մասնակից էր ուրախութեանն ու տխրութեանը.

51. երեսը ռուսերէնից թարգմանութիւն է անկանոն ոճերով և այլն:

Ընդհանրապէս գրողը բաւական աշխատանք է թափել և գործ կատարել է. աշխատանքը ուշագրաւ է և իւր տեսակի մէջ առաջինը լինելու պատճառով: Գրողի վրայ պարտք է մնում՝ այդ ուղղութեամբ աշխատելիս աւելի լուրջ և բազմակողմանի աղբիւրների հետ ծանօթանալով աշխատանք կատարել և իւր աշխատութեան մեթոդը գիտական-պատմական դարձնել. հեռու մնալ դիլէտանտիզմից: Անհրաժեշտ է պատմագիտութեամբ լուրջ պաշտպել և այդ հետաքրքիր աշխատանքին գիտական արժէք տալ:

Գ. ա.